Հավելված N 2
ՀՀ կառավարության 2025 թվականի
սեպտեմբերի 11-ի N 1304 - Ն որոշման

ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով կարգավորվում են ոստիկանության, այդ թվում՝ ոստիկանության գվարդիայի ծառայողների (այսուհետ՝ ոստիկանության ծառայող) կողմից իրենց լիազորությունների իրականացման ընթացքում հատուկ միջոցների կիրառման և դրանց պահպանման ժամկետների հետ կապված հարաբերությունները:

2. Ոստիկանության, այդ թվում՝ ոստիկանության գվարդիայի սպառազինության (այսուհետ՝ սպառազինություն) մեջ կարող են ընդգրկվել համապատասխանաբար «Ոստիկանության մասին» օրենքի 32-րդ և «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի 21-րդ հոդվածների 2-րդ մասերով նախատեսված հատուկ միջոցները:

3. Սպառազինության մեջ չընդգրկված հատուկ միջոցների կիրառումն արգելվում է:

4. Հատուկ միջոցները կարող են կիրառվել բացառապես «Ոստիկանության մասին» և «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքներով նախատեսված նպատակներով և դեպքերում՝ սույն կանոններին համապատասխան:

2. ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5. Հատուկ միջոցները կիրառվում են բացառապես դրանց նշանակությանը և տեխնիկական բնութագրերին համապատասխան:

6. Հատուկ միջոցներ կիրառելիս դրանց կիրառման կանոնների, ինչպես նաև անվտանգության պահանջների պահպանումը պարտադիր է:

7. Ձեռնաշղթաները կիրառվում են անձի ակտիվ ֆիզիկական գործողությունները սահմանափակելու նպատակով: Կիրառումից հետո անհրաժեշտ է երկու ժամը մեկ ստուգել ձեռնաշղթայի փականների վիճակը, անհրաժեշտության դեպքում՝ թուլացնել սեղմվածքը:

8. Կապող ցանցերը կիրառվում են անձի կամ մի խումբ անձանց ագրեսիվ ֆիզիկական գործողությունները սահմանափակելու նպատակով: Կապող ցանցերը կիրառելուց հետո կիրառվում են ձեռնաշղթաներ:

9. Մահակները կիրառվում են անձի ոչ իրավաչափ վարքագիծը կանխելուն կամ խափանելուն ուղղված, այդ թվում՝ ինքնապաշտպանական գործողություններ կատարելու համար: Արգելվում է մահակներով հարվածներ հասցնել անձի գլխին, պարանոցին և կենսական այլ օրգաններին՝ ներառյալ որովայնի և միզասեռական օրգանների հատվածներին:

10. Ապակողմնորոշող լուսային և ձայնային ձեռքի նռնակները, կրակոցները և արկերը կիրառվում են ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորող, այդ թվում՝ զանգվածային անկարգություններ կամ հակահիրավական խմբային այլ գործողություններ կատարող անձանց նկատմամբ կանխարգելիչ և վնասազերծող գործողություններ իրականացնելու նպատակով՝ հզոր լուսային և ձայնային ազդակների միջոցով հոգեբանաֆիզիոլոգիական ներգործության կիրառմամբ: Թույլատրվում է կիրառել միայն բաց տեղանքում (եթե տվյալ տեսակը նախատեսված չէ փակ տեղանքում կիրառելու համար)՝ անձից նվազագույնը 2.5 մետր հեռավորության վրա:

11. Ձեռքի ծխանռնակները, ծխագլանակները, ծխային կրակոցները և արկերը կիրառվում են ծխային ծածկույթի հաշվին անձանց հոգեկամային կայունությունը ճնշելու միջոցով նրանց ոչ իրավաչափ վարքագիծը, այդ թվում՝ զանգվածային անկարգությունները կամ հակահիրավական խմբային այլ գործողությունները կանխելու և խափանելու ընթացքում, ինչպես նաև ոստիկանության ծառայողների գործողությունները քողարկելու նպատակով: Ազդեցության գոտում ձեռքի ծխանռնակների, ծխագլանակների, ծխային կրակոցների և արկերի կրկնակի կիրառումն արգելվում է:

12. Էլեկտրահարող սարքերը, կայծային պարպիչները կիրառվում են անձի ոչ իրավաչափ վարքագիծը կանխելուն կամ խափանելուն, ինչպես նաև անձին վնասազերծելուն ուղղված, այդ թվում՝ ինքնապաշտպանական գործողություններ կատարելու նպատակով՝ առանց անձին ֆիզիկական վնաս պատճառելու: Էլեկտրահարող սարքերը և կայծային պարպիչները կիրառվում են մեկանգամյա ազդեցության համար, 3 վայրկյանից ոչ ավելի տևողությամբ՝ միայն մարդու մարմնի մկանային հատվածներում: Արգելվում է դրանց կիրառումը ջրային միջավայրում, ինչպես նաև մարդու մարմնի զգայուն հատվածներում (գլխի, պարանոցի, սրտի, ստոծանու շրջանում): Էլեկտրահարող սարքերի և կայծային պարպիչների կրկնակի կամ բազմակի կիրառումն արգելվում է:

13. Արցունքաբեր, գրգռիչ գազով ձեռքի սրվակները կիրառվում են անձի կամ անձանց խմբի ոչ իրավաչափ վարքագիծը կանխելուն կամ խափանելուն, ինչպես նաև նրանց վնասազերծելուն ուղղված գործողություններ իրականացնելու ընթացքում: Կիրառման ժամանակ անհրաժեշտ է գազի շիթն ուղղել անձի ուղղությամբ: Բաց տարածքներում արցունքաբեր կամ գրգռիչ գազով ձեռքի սրվակներն անհրաժեշտ է գործադրել քամու ուղղությանը համապատասխան: Արգելվում է դրանց կիրառումը բաց կրակին մոտ տարածության վրա:

14. Ծառայողական շները (պահնորդական, հետախուզական, պարեկային) կիրառվում են անձի ոչ իրավաչափ վարքագծին հակազդելու համար հոգեբանա-ֆիզիոլոգիական ներգործության միջոցով կանխարգելիչ և վնասազերծող գործո-ղություններ իրականացնելու ընթացքում: Արգելվում է պարեկության ժամանակ ծառայողական շները փոխանցել այլ անձանց կամ թողնել առանց հսկողության: Ծառայողական շները պետք է ստանան պարտադիր պատվաստումներ, ինչը հավաստվում է իրավասու մարմնի տված վկայականով:

15. Արգելքներ քանդող գործիքները (սարքերը) և տեխնիկան կիրառվում են պատեր, դռներ, դռան փականներ կամ այլ խոչընդոտներ վերացնելու միջոցով անձանց ոչ իրավաչափ վարքագիծը խափանելուն, ինչպես նաև նրանց վնասա-

զերծելուն ուղղված գործողություններ իրականացնելու համար: Սույն կետով նախատեսված հատուկ միջոցները պետք է կիրառվեն այնպես, որպեսզի արգելքների կամ խոչընդոտների հետևում գտնվող անձանց պատճառվելիք հնարավոր վնասը լինի նվազագույն:

16. Մարդկանց և տրանսպորտային միջոցները հարկադրաբար կանգնեցնելու (արգելափակելու) տեխնիկական պատնեշները, ճանապարհային ոզնիները և փշալարերը կիրառվում են անձանց ոչ իրավաչափ վարքագիծը խափանելու նպատակով՝ մարդկանց տեղաշարժը սահմանափակելուն, ինչպես նաև տրանսպորտային միջոցների ընթացքը դադարեցնելուն ուղղված գործողություններ իրականացնելու ընթացքում: Տրանսպորտային միջոցները հարկադրաբար կանգնեցնելն արգելվում է կիրառել՝

1) շտապ բժշկական օգնության ծառայության ավտոմեքենաների նկատմամբ.

2) մոտոցիկլների, մոտոսայլակների և մոպեդների նկատմամբ.

3) լեռնային ճանապարհներին կամ ճանապարհի սահմանափակ տեսանելիությամբ հատվածներում.

4) երկաթուղային գծանցներում, թունելներում, կամուրջների, ուղետարների և էստակադաների վրա.

5) ուղևորափոխադրող տրանսպորտային միջոցների նկատմամբ, եթե դրանցում առկա են ուղևորներ:

17. Զրանետերը, այդ թվում՝ հատուկ ներկող նյութերի օգտագործմամբ, կիրառվում են բարձր ճնշման ջրի շիթի օգնությամբ անձանց մեծաքանակ խմբերի ոչ իրավաչափ գործողությունները խափանելու համար՝ նրանց առաջընթացը կասեցնելու, տարանջատելու և մեկուսացնելու նպատակով: Արգելվում է ջրանետերն օգտագործել անձանց ֆիզիկական վնաս պատճառելու համար:

18. Զրահամեքենաները կիրառվում են անձանց ոչ իրավաչափ վարքագիծը, այդ թվում՝ զանգվածային անկարգությունները կամ հակահիրավական խմբային այլ գործողությունները խափանելու ընթացքում ոստիկանության ծառայողների

արագ և անվտանգ տեղաշարժն ապահովելու, ինչպես նաև այդ գործողություն-ներին հակազդելու արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Արգելվում է զրահամեքենաներն օգտագործել անձանց ֆիզիկական վնաս պատճառելու համար:

19. Արցունքաբեր, գրգռիչ գազով ձեռքի նռնակները, կրակոցները և արկերը կիրառվում են արցունքաբեր և գրգռիչ նյութերի բաղադրությամբ գազածխային ծածկույթի հաշվին անձանց հոգեկամային կայունությունը ճնշելու միջոցով նրանց ոչ իրավաչափ վարքագիծը, այդ թվում՝ զանգվածային անկարգությունները կամ հակահիրավական խմբային այլ գործողությունները կանխելու կամ խափանելու ընթացքում: Բաց տարածքներում արցունքաբեր կամ գրգռիչ գազով ձեռքի նռնակները, կրակոցները և արկերն անհրաժեշտ է գործադրել քամու ուղղությանը համապատասխան՝ մարդուց նվազագույնը 40 մետր հեռավորության վրա: Ազդեցության գոտում արցունքաբեր կամ գրգռիչ գազով ձեռքի նռնակների, կրակոցների և արկերի կրկնակի կիրառումն արգելվում է:

20. Ռետինե գնդակներով փամփուշտները կիրառվում են անձանց ոչ իրավաչափ վարքագիծը խափանելու նպատակով կանխարգելիչ և վնասազերծող գործողություններ իրականացնելու ընթացքում, այդ թվում՝ ոստիկանության ծառայողի ինքնապաշտպանության համար: Անձի գլխին ռետինե գնդակով կրակ արձակելն արգելվում է: Ռետինե գնդակով փամփուշտները կիրառվում են մարդուց՝ արտադրողի կողմից սահմանված տեխնիկական բնութագրերով նախատեսված նվազագույն հեռավորությունից:

21. Նույնականացնող կամ տարբերակող ներկող նյութերը կիրառվում են ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորած անձանց գունավորման եղանակով պարզելու և հայտնաբերելու նպատակով: Ալյումինային հիմքով ներկող նյութերը գործադրվում են ջրանետի միջոցով: Ներկող նյութերը մարդու կյանքի և առողջության համար չպետք է վնասակար ազդեցություն ունենան:

3. ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

22. Հատուկ միջոցներ կիրառող ոստիկանության ծառայողը պետք է հանդերձավորված լինի տվյալ հատուկ միջոցի կիրառման համար անհրաժեշտ անհատական պաշտպանության միջոցներով (սաղավարտ, վահան, զրահաբաճկոն, հակագազ և այլն):

23. Հատուկ միջոցների կիրառումից անմիջապես հետո իրականացվում է տարածքի կամ շինության զննություն՝ տուժած անձանց, հրդեհի հնարավոր օջախների, կենսաապահովման օբյեկտների խափանումների և չգործած հատուկ միջոցների հայտնաբերման, ինչպես նաև դրանց վնասազերծման նպատակով: Անհրաժեշտության դեպքում իրականացվում է գազանջատում:

24. Գազածխային զանգվածի ազդեցության գոտում բոլոր գործողություններն իրականացվում են անհատական պաշտպանության միջոցներով:

25. Գազածխային զանգվածի ազդեցությունից տուժած անձանց առաջին օգնություն ցույց տալու համար օգտագործվում են անուշադրի սպիրտ (շնչելու համար) և կերակրի սոդայի երկու տոկոսանոց ջրային լուծույթ կամ բորաթթվի ջրային լուծույթ (աչքերը լվանալու համար):

26. Արգելվում է մոտենալ չգործած հատուկ միջոցներին դրանց օգտագործումից հետո՝ 10 րոպեի ընթացքում:

27. Չգործած հատուկ միջոցների կրկնակի կիրառումն արգելվում է:

28. Արգելվում է իրանի կամ թաղանթի վրա վնասվածքներ (ճաքեր, փոսիկներ, սեղմվածքներ և այլն) ունեցող հատուկ միջոցների օգտագործումը:

29. Արգելվում է մասնատել կամ վերանորոգել վնասված կամ չգործած հատուկ միջոցները:

30. Շահագործման համար ոչ պիտանի հատուկ միջոցների կիրառումն արգելվում է:

31. Հատուկ միջոցները պահպանվում են մինչև դրանց տեխնիկական բնութագրերով նախատեսված ժամկետների լրանալը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

11.09.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ